

ՃԻՔԿՈՆ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Ասում աս, ասավ՝ մի քիր ու ախպեր են ըլլում, շատ էլ քյասիբ են ըլլում: Դրանք բազարի կշտին մի ֆողե տուն են ունենում, քիրը տանը կենում աս, ախպերը գնում աս ծմակիցը շլակով փետ աս բերում, ծախում աս, յուլա են գնում:

Օրի մի օրն էլ գնում աս ծմակը մը փետն անում, շլակում, գալիս աս հասնում մի թալա, դրա ընգաճովը մի ձեն աս ընգնում. «Ինձ տանողն էլ աս փոշման՝ թողողն էլ»:

Գնում աս տենում՝ մի իսանի չոր կարկաժ աս վեր ընգած:

Ասում աս.— Ի՞նչ անեմ, ինչ չանեմ, ոնչ տանիմ, ոնչ թողամ, լավն են աս էս փետը վրեն վառեմ, թողամ գնամ: Դա էդ փետը վրեն վառում աս, բիրադի կարկաժի հետ մոխիր աս անում, թողում աս գնում տուն:

Քիրն ասում աս.— Ախպեր, խի՞ չես փետ բերել, բա էքուց ի՞նչ տինք ուտիլ:

Ասում աս.— Հիվանդ էի, կարացի ոչ բերեմ:

Էքսի օրը էդ գրնում աս ծմակը, փետը կապում աս, շլակում, գալիս աս հասնում էն թալեն, ասում աս.— Հլա տենամ ինչ աս դառել:

Փետի ծերով խառնում աս, տենում աս միջին մի կանանչ հուլունք: Հուլունքը վեր աս ունում, գցում բլզի ծոցաջեբը, փետը շլակում աս, գալի տուն:

Անց աս կենում մխելի վախտ, մի օր էլ քվորն ասում աս. — Շորերս լվա, գնալ տեմ նոքարութին անիլ, բալի մի քանի խան հատիկ տան՝ ցանեմ, թե չէ սհե ապրիլ չի իլիլ:

Քիրը ծորերը լվանալիս տեղը տենում աս, որ ախպոր ջեբումը մի սիրուն հուլունք կա: Էն հատաղ մաջալ չի ունենում հուլունքն ուրիշ տեղ պհե, գցում աս բերանը, որ լիզվի տակին պհե: Շորերը լվանալիս տեղը ոնց աս ըլլում հուլունքը մի դափիլ կուլ աս գնում: Էլ ախպորը բան չի ասում, շորերը լվանում աս, տալի իրան, ախպերը գնում աս նոքարութենի:

Շատ աս անց կենում, թե քիչ, ախպերը հատիկը շլակած էդ աս գալի, գալիս աս տենում քիրն էրկու ֆոքիս աս:

Ասում աս.— Այ քիրա, բա էս նոքարութենով, դոնեդուռն ընգնելով մեր գլուխը պհեմ, դու տհենց բան անե՞ս:

Քիրն օրթում կրակն աս ընգնում, ասում աս.— Ես օքմու էրես չեմ տեհել, մենակ քու ջեբիցը սհե-սհե մի հուլունք լեզվիս տակին պհեցի, որ կորչի ոչ, մի դափիլ կուլ գնաց:

Ըստի նոր ախպերը մատը կծում աս, հմա բան չի ասում: Գրնում աս հրեվանիցը մի լուձ եզն աս ուզում, չուրթ լծում աս, գնում աս ֆողը վարելու, որ բերածը շատանա մի քանի խան հատիկը ցանե:

Էդ սրբմն էլ քվոր վաղեն աս ըլլում, խտոր աս ընգնում, մի տղա բերում:

Տղեն դեռ ըրորոցումը չեն դրած ըլլում, ասում աս.— Նանի, հաց տու քեռու հմար տանիմ:

Մերը վրեն չրանում աս, հմա տատները մի փեշկըրի միջի հացը կապում աս, տալի ձեռը:

Դա գնում աս հասնում քեռու ֆողը, ձեն աս տալի.— Քեռի՛, հաց եմ բերել, արի կի:

Հմա դա ակոսի միջին կաղնել աս, ըրնում չի:

Քեռին ասում աս.— Էս ի՞նչ բան աս, ստաներոց եմ ելել, ի՞նչ աս, ինձ հմար ո՞վ տի հաց բերիլ:

Եդո եզնիքը վեր աս թողում, որ բան աս, թե ստանա ըլի, ինքը կփախչի, եզնիքը լծած չի մնան:

Ասում աս.— Ո՞վ ես, մի բան ծուլ արա, տենամ ո՞րդի ես:

Դա մի կտոր ֆող աս ծուլ անում, քեռին տենում աս, որ իրա ֆողի միջին աս: Միրտ աս անում, գնում աս տենում, որ մի ըրեխա իրանց փեշկըրումը հաց փթաթած, ձեռին կաղնած աս:

Ասում աս.— Էդ ո՞ւմ տղեն ես:

Ասըմ ա.— Քու քվոր տղեն եմ:

Եդ մատը կծեց, բան չի ասավ: Հացը կերավ պրծավ, վե կացավ եզնիքը լծեց, որ վարն անե:

Ըրեխեն ասավ.— Քեռի, ես եզնիքը կքշեմ:

Նստեց լծանը, եզնիքը քշեց, որ հասավ ֆողի ծերն ու աչող հոք արավ, քեռին ասավ.— Ղոչաղ ճիքկո:

Հտիան անըմը կպավ «Ճիքկո»:

Ֆողը վարեցին, ցանեցին, տափեցին, պրծան, էկան հասան գեղի դրաղը, ճիքկոն ասավ.—

Քեռի, դու չութը տար տուն, ես էս ըրեխանց հետ խաղ տիմ անիլ:

Քեռին չութը տանըմ ա տուն, ինքը ըրեխանց հետ խաղ ա անըմ: Խաղալու վախտը տենըմ ա, որ էրկու սև ձիավոր են գալի:

Ըրեխանց միջից ջգվըմ ա, գնըմ ա դրանց ըղաքին կանգնըմ, ասըմ.— Ես գիտեմ, թե դուք ուր եք գնըմ:

Ասըմ են.— Ո՞ւր ենք գնըմ:

Ասավ.— Թաքավորն էրագ ա տեհել, դուք գնըմ եք Ղուռանին բերեք, որ դա էրագը բաց անի, հմա նա կարավ չտի, էդ էրագը մենակ ես կարամ բաց անեմ:

Ասավ ու դոշին ձեռով տվուց:

Ասին.— Անըմըդ ի՞նչ ա:

Ասավ.— Իմ քեռին ինձ ճիքկո ասավ, էդ էլ ինձ կպավ:

Նրանք բանի տեղ չի դրին, ծիծաղեցին, թողին գնացին: Գնացին Ղուռանին տարան, հմա կարաց ոչ էրագը բաց անի:

Ասին.— Թաքավորն ապրած կենա, փլան տեղը մի ըրեխա սեե բան ասավ:

Ասավ.— Գնացեք էդ ըրեխին բերեք:

Գնացին ճիքկոյին տարան թաքավորի կուշտը:

Թաքավորն ուզեց էրագը պատմե, ոնց որ Ղուռանին էր պատմել, հմա ճիքկոն ասավ.— Ես քո էրագը գիտեմ, պետկը չի, դու էրագըմըդ տեհել ես, որ քու պալատի գլխովը կանանչ ու

կարմիր ա անց կացել, պալատիդ դրաղըմը ծառեր ա ցանել:

Մի հատ շամփուր ուզեց, մի հատ բահ, մի հատ էլ մշակ:

Գնաց դուս մի տեղ շամփուրով տվուց, մշակին ասավ.— Փորե:

Մշակը փորեց, հանեց մի քիլա ոսկի: Գնաց մեկել դրաղը շամփուրով փորեց, էդ փորիլ տվուց,

հանեց մի քիլա էրծաթ, բերուց տվուց թաքավորին: Թաքավորը ինչքան ոսկի որ տալ տեր

Ղուռանին, տվուց ճիքկոյին, հմա մշակին բան չի տվուց: Ճիքկոյի քեփին կպավ, մի բուռը ոսկի

տվուց մշակին, ինքը դուս էկավ: Ղուռանը աչքերը չորս արած՝ դրա եղնուց դուս էկավ: Ճիքկոն բեզարեց, ճամփին նստեց մի սառ ախպրի կշտի՝ դինջանալու:

Ղուռանն էկավ դրա եղնա հասավ, ասավ.— Տղա ջան, ես տղա չունեմ, ինձ տղացու կգա՞ս:

Ասավ.— Ես քյասիբ, քյուսըբի տղա եմ, թե իմ հաշիվը կտաս, նոքար կգամ:

Ասավ.— Ինչքա՞ն ա քու հաշիվը:

— Իմ քաշովը մին ոսկի, թե կտաս՝ կգամ:

Ղուռանն իրան ունեցած ոսկին թոփ արավ, դրա քաշով մին ոսկին դգեց՝ տվուց: Ճիքկոն

ոսկին տարավ մորն ու քեռուն տվուց, ինքը գնաց Ղուռանի տուն:

Ղուռանը մի ախշիկ ունեք, ախշկանն ասավ.— Ես գնըմ եմ բաղնիս, գամ տենամ էս ըրեխին

մորթել ես, ըղուղը փլավի հետ էփել, որ ուտեմ՝ ես էլ խելքովանամ:

Ասավ ու ինքը դուս էլավ:

Ախշիկը նստեց մտկամուր, դանակը սրըմ ա, որ մորթե, հմա դիմիշ չի անըմ, մեխկը գալիս ա:

Ճիքկոն ասավ.— Ասե՞մ ինի ես դանակը սրըմ:

Ասավ՝ ասա: Ասավ.— Մըմ ես, որ ինձ մորթես, իմ ըղուղը քու հերն ուտե, որ մթամ խելքովանա, հմա տհենցով խելքովանալ չի ըլիլ, գուր ա:

Ասավ.— Բա ո՞նց անենք, որ գա տենա մորթիլ չեմ. ինձ կսպանե:

— Գնա մի մոզի առ բի մորթենք, ըղուղը կջգենք, կեփես, մի բան էլա գլխի չի ըլիլ:

Ախչիկը գնաց մոզին առավ, բերեց: Ճիքկոն մորթեց, ըղուղը ջգեց, էփել տվուց, ինքը մտավ զանդուկի մեջը, ասավ.— Փագե, բլանիքը ջեբըմըդ դիր:

Ախչիկը տհենց էլ անըմ ա: Հերը գալիս ա տենըմ փլավը հազիր, ըղուղը միջին էփած: Ուտըմ ա, մի բան էլա գլխի չի ըլըմ:

Անց ա կենըմ երկու օր թաքավորը եդ մի էրագ ա տենըմ: Գալիս են Ղուռանին տանըմ:

Թաքավորը պատմըմ ա էրագը, որ էրագըմ Սև ծովն ու Կապիտ ծովն իրար են խառնվել:

Ղուռանը կարըմ չի էրագը բաց անե: Եդ ա գալի իրա տուն, մի պինդ ֆոքոց ա քաշըմ:

Ախչիկն ասըմ ա.— Խի՞ ես ֆոքոց քաշըմ:

Ասըմ ա.— Ահագին ոսկիս կորավ, կարացի ոչ էրագը բաց անեմ, վայ իմ Ճիքկո:

Ճիքկոն զանդուկից ասավ.— Ըստի եմ, վախիլ մի:

Ղուռանն ըրմացավ, զանդուկի դուռը բաց արավ, Ճիքկոն միջիցը դուս եկավ:

Ասավ.— Ճիքկո, թաքավորն էլ եդ էրագ ա տեհել, իրեք օր սրա ա տվել, թե կարացի ոչ հանեմ՝ գլուխս տալ տի:

Ասավ.— Գնանք:

Վե կացան գնացին: Ղուռանը տանից դուս գալիս մի գեշ մտիկ արավ ախչկանը, ասավ.—

Լավ, էս ա եդ կգամ, դուն ինձ խաբե՞ս:

Ախչկա թուք ու մուքը կպավ, հմա բան չի կարաց ասե:

Գնացին թաքավորի պալատը հասան:

Ճիքկոն ասավ.— Թաքավորն ապրած կենա, մի քիչ վախտ պալատիդ իրավունքնին ինձ տուր, էս քու էրագը բաց անեմ:

Ասավ.— Տվի:

Դա թաքավորի սապոքնին հաքավ, թուրը կապեց, ասաց.— Մի ձմերուկ բերիլ տու, բեզարած մարթիք ենք, ուտենք, եղնա՝ էրագդ բաց կանենք:

Թաքավորը քոծին դրգեց, գնաց մի ձմերուկ բերուց:

Դա ձմերուկը դրուց ստոլին, դանակը հանեց կտրելու, ձմերուկի միջին դանակը թողեց,

ասավ.— Թաքավորն ապրած կենա, դանակս կորավ, մինդ ու մինդ հլբաթ գողացաք:

Ասավ.— Օբիսկն արա, իրավունքը քունն ա, ինչ անես, էս ձեն հանելու իրավունք չունիմ:

Ճիքկոն վե կացավ, թաքավորի կնգանն ու քոծին օբիսկն արավ, ծիծաղեց ու էկավ նստեց ձմերուկը կերավ:

Թաքավորն ասավ.— Ի՞նչ էրագ էր, ասա տենամ:

Ասավ.— Թաքավորն ապրած կենա, էրագը մինն ա ըլըմ, քանի՞ էրագ էս ուզըմ բաց անեմ:

Ասավ.— Ասա տենամ էս գլխի չէլա:

Ասավ.— Քու էրագն էն էր, որ մթամ Սև ու Կապիտ ծովերն իրար են խառնվել, կնիկդ քոծ ա դառել ու Եներալի հետ քեփ ա անըմ, քոծն էկել ա քու կնիկը դառել:

Թաքավորն ասավ.— Ի՞նչ դիվան անենք:

Ճիքկոն վե կացավ, թուրը հանեց, տվուց Ղուռանի գլուխը թոցուց:

Ասավ.— Խի՞ տհենց արիր:

Ասավ.— Ես իմ թշնամու դիվանն արի, թե նամուսով թաքավոր էս, դուն էլ քու թշնամուն արա:

Էկավ սապոքնին էլ հանեց, թուրն էլ եդ արավ, տվուց թաքավորին ու գնաց իրա մոր տուն:

Եներալն իմանում աս, մտկըմը դնում աս, որ Ճիքկոյին սպանի: Թաքավորի կնկանն էլ փախցնում աս, գնում աս մի ուրիշ քաղքըմը պալատնի շինում, առոք-փառոք ապրում:

Թաքավորն ինչքան գորք աս դրգըմ, կարում չեն գոռեն, գեղացոնց ապրուստը խլում աս, ինքը աղի պէս ապրում:

Ճիքկոն գնաց մորը հարցուց: Նանի, մենք ո՞րդի քյասիք բարեգամ ունենք, գնամ մի քիչ ապրացնեմ:

Ասավ.— Բալա ջան, փլան գեղըմը մի տատ ունիմ, անըմը Թելո աս, թե կարաս գնա ապրացրու, դժար աս ապրում:

Դա վեր կացավ, գնաց տատին գտավ:

Ասավ.— Տատի հզարենցը մի հետ թոռդ դոնախ աս էկել, ի՞նչ տես պատիվ անիլ:

Ասավ.— Տոռն ու մոխիրը կենա գլխիս, բալա ջան, մի բան էլա ունիմ ոչ:

Ասավ.— Բա դուն ընչո՞վ ես ապրում:

Ասավ.— Ես մի էծ ու մի չոլախ դագ ունեի, Եներալն էծս իլեց, հըմի օրեկան դագս մի ձու աս ածըմ, էն եմ ծախում ու ապրում:

Ասավ.— Լավ, տատի բի քու դագը ծախենք, ըսօր ապրենք:

Ասավ.— Բալա ջան, բա ես եդո ո՞նց կապրեմ:

Ասավ.— Վախիլ մի, ես մի ճար կանեմ:

Ասավ.— Դե դու գիտես:

Ճիքկոն դագը կոնատակին դրուց, գնաց բազարը: Գնաց տեհավ Եներալն իրա հնգորտանց հետ քեֆ աս անըմ:

Ասավ.— Այ լավ դագը, այ լավ դագը:

Եներալը տեհավ, դրան ձեռովն արավ, կանչեց կուշտը:

Գնաց՝ ասավ.— Ի՞նչ տամ դագիդ:

Ասավ.— Իրեք մանեթ:

Ասավ.— Մի մանեթը գոռի արժե, ձենդ կտրե:

Ասավ ու գլխին տվուց, ձեռիցն առավ, մի մանեթը վրա արավ, որ Ճիքկոն վեր ունի: Ճիքկոն մանեթը վեր կալավ, թաքուն Եներալի եղնա գնաց:

Եներալը գնաց իրա տունը, դագը մորթեց, կնգանն ասավ.— Կկարմրացնես, կդրգես բազարը հնգորտանցս հետ քեֆ եմ անըմ:

Ճիքկոն դռան տակին տապ էր արել, անգանձ աս դնում:

Կնիկն ասավ.— Բա ո՞ւմ հետ դրգեմ:

Ասավ.— Մնին կդրգեմ կգա ճկիթը շհանց կտա, իրան կտաս կդրգես:

Ասավ ու ինքը գնաց: Կնիկը դագը փետեց կարմրացրուց:

Ճիքկոն դռան տակիցը դուս էկավ, ասավ.— Եներալը դագն ուզեր,— ճկիթը շհանց տվուց, դագը վե կալավ ու գնաց, դռան վրա գրեց.— Ես՝ Ճիքկոն, դու՝ Եներալը, դա պուճուր օյին էր, սենձ օյինը եղնուց աս:

Տարավ դագը տուն, տատի հետ մի լավ կերան:

Եներալն իրան հնգորտանցից մնին դրգեց տուն, որ դագը բերե:

Կնիկն ասավ.— Դագը մինն էր, խո տասնը մինը չէ՞ր, դրգեցի էլի՞:

Եդ գնաց Եներալին ասավ, Եներալն ինքը վե կացավ, էկավ տուն, էկավ դռան վրա կարթաց Ճիքկոյի գրածը, մատը կծեց, էլ բան չի ասավ:

Ճիքկոն մի մանեթը տվուց տատին, ասավ.— Գնա ինձ հմա՝ մի ձեռք ըխչըկա շորեր առ, բի ինձ հաքցրու, ասա,— Քոճ եմ տալի: Ով ինչքան փող տա, տաս ոչ, հենց որ ոտդ ոտկեմ— կտաս:

Տասրը գնրմ ա ասածն առնրմ, բերրմ հաքցնրմ դուս տանրմ: Ով ինչքան փող ա տալի, տալիս չի. Եներալը գալիս ա թե չէ, Ճիքկոն տատի ոտը ոտկրմ ա, Եներալը տասը մանեթ ա տալի, տանրմ իրա տունը քոծ: Գնրմ են տենրմ Եներալի կնիկը գնացել է բաղնիս:

Եներալը բերրմ ա բլանիքնին չիմ տալի քոծին, դոները բաց անրմ, ամեն բան էլա շհանց տալի, մի դուռ էլ բաց ա անրմ, տենրմ ա մի մընգանա սարքած, ասրմ ա.— Տենր՝մ ես էս մընգանեն, քու մագի հմբարքով մին օքմին ա խեղդոտել, որ դուն էլ գեշ ըշխատես, քեզ էլ տամ խեղդիլ: Ասրմ ա.— Բա դրանով ո՞նց ես խեղդրմ:

Ասրմ ա.— Գլուխդ դիր ըրանքումը, շհանց տամ:

Ճիքկոն գլուխը դնրմ ա, Եներալը հուփ ա տալի: Ասրմ ա.— Վա՛յ, խեղդվրմ եմ,— բոշ ա անրմ, գլուխն ըրանքից հանրմ:

Ասրմ ա.— Շլա դուն էլ դիր, տենանք ես կարա՞մ հուփ տամ:

Եներալը գլուխը դնրմ ա ըրանքումը Ճիքկոն հուփ ա տալի:

Քանի նա ասրմ ա խեղդվեցի, նա հուփ ա տալի, տհենց հուփ տված թողրմ ա, ինքը գնրմ նրա ոսկենին հվաքրմ, բեռը սարքրմ, մի ուխտի բարցրմ ա, գնրմ դրան վրա գրրմ.— Ես Ճիքկոն, դու Եներալը, դա պուճուր օյին էր, վենձ օյինը եղնուց ա:

Եներալի կնիկը բաղնիսիցը գալիս ա տենրմ, որ դոները չիմ բաց ա: Գնրմ ա տենրմ մարթը մընգանրմը էն հա խեղդվրմ ա: Հանրմ ա բերրմ տեղրմ խտոր ձգրմ:

Ճիքկոն գնաց տատի տուն, ոսկին տվուց իրան. ասավ.— Տես, ինչքան էս գեղերումը քյասիբ տուն կա— էս ոսկին փայ արա նրանց, քու փայն էլ քեզ վե կալ, ինձ հմար մի ձեռք բժշկի շոր առ, մի ածըլի, մի դալիբ սապոն, մի պաչկա աղ, մի հատ էլ կարգինկա:

Տասրը գնաց էդ ասածնին բերուց, դա հաքավ, կարգինկեն ձեռը վե կալավ, գնաց Եներալի դոնովն անց կենալով ձեն տվուց.— Այ լավ բժիշկ, այ լավ բժիշկ:

Եներալը ձենն իմացավ, կնգանը դրգեց կանչիլ տվուց:

Ասավ.— Կարա՞ս սաղացնես:

Ասավ.— Կարամ, թե ասածնիս անեք: Ասին.— Ի՞նչ ա:

Ասավ.— Մի բաղնիս դրդակիլ տուր, հավուզը ջուր լցրու, քեզ տանին ընդի, գամ բժշկեմ: Տհենց էլ արին:

Ասավ.— Հիվանդ մարթ ա, կծվա, կճղա, ոչով մոտ չի գա:

Տարավ հավուզի կշտին թող արավ, սապոնը միչկին փրփրացրուց, ածըլով մեչքը կտրատեց, աղը սապնի փրփրի հետ մեչն ածավ:

Քանի նա մխկտոցիցը գոռոցն ընգավ, դա իրան գործն առաջ տարավ ու ասավ.— Դիմացի, բան չի կա, գեղացոնց ջանը դու շատ ես մխկտացրել:

Դուս էկավ, բաղնիսի դրան վրա գրեց.— Ես Ճիքկոն, դու՛ Եներալը, դա պուճուր օյին ա, վենձ օյինը եղնուց ա:

Անց ա կենում մխելի վախտ, մի օր էլ թաքավորը եղ երագ ա տենրմ, կանչիլ ա տալի Ճիքկոյին:

Ասրմ ա.— Ես իմացել եմ, թե դուն ինչ օյիննի ես հանրմ Եներալի գլխին, իմ սրտիցն ես ջուր խմրմ, հմի մի երագ եմ տեհել, թե կարացիր հանես, ինչ մուրագ ուզենաս ձեռիցս եկածը ինահիլ չեմ:

Ասրմ ա.— Քու տված մուրագն ինձ պետկը չի, քու երագն էնա, որ քու դրանը սատկած օձ ես տեհել:

Ասրմ ա.— Բա դա ինչ բան ա:

Ասրմ ա.— Քու դուշմանն իրան ոտով գալ տի քու դուռը:

— Ո՞նց:

— Որ գա, կտենաս:

Ճիքկոն գնում ա մի օխտը տարեկան տրի մորթի ճարմ, ամեն օխտը մագին մի հատ բոժ ա կախ անում, միչին փթաթվում ա, հետը գունա-դիուլի վեր ունում ու գնում մի փուրդունի միչի նրստում, ճամփա ընգնում դբա Եներալի գեղը: Փուրդունն ու գունաչքերը գեղի դրադին թողում ա, քշերվա կիսին ինքը գնում ա Եներալի տան կտրովը տուն մտնում, ձեռը դնում ա Եներալի ու իրա կնգա բգին ու իրան թափ տալի: Որ թափ ա տալի հա, բոժերը գնգնգոցն են ընգնում, դրանք զարթնում են:

Եներալը հարցնում ա.— Ո՞վ ես... էլ կարում չի բան ասել, թուքը ցմաքում ա:

Ասում ա.— Ես Գաբրիել հրեշտակն եմ, էդքան որ դու անմեղ արին ես թափել, գեղացոնց ցամաք հացն էլ ես կտրել, մի կտոր ֆողն էլ ես ձեռիցը խլել, դրա հմար աստոժ ինձ դրգել ա, որ ֆոքիդ առնեմ:

Ասում ա.— Բա մի օր էլ ա մաջալ չես տա՞լ:

Ասում ա.— Չկել էքուց մաջալ կտամ, որ քու տան դռան կաղնի ծառը կտրես, մի վենձ կուբո շինես, որ էքուց քշեր գամ քեզ ու կնգանդ միչին տենամ ու տանեմ:

Ասում ա ու էդ կտրովը թոզ ա կապած ըլում, էդ թոզովը բռնելով դուս ա ըլում: Էքսի օրը Եներալը կաղնի ծառը կտրիլ ա տալի, մի վենձ կուբո ա շինել տալի, սն օր սուք մտած ճամփա են պիւմ հրեշտակին:

Մութն ընգնում ա թե չէ, Ճիքկոն փուրդունը բերում ա Եներալի դռանը ոտն ա անում, ինքը էդ կտրովը վեր գալի, տենում ա Եներալն ու իր կնիկը դրդողում են:

Ասում ա.— Մտեք կուբոն:

Էրկուսին էլ կուբոն ա ածում, դփուլը ծածկում, դռները բաց ա անում, դուռն աչքերի հետ տանում ա դնում փուրդունի միչին ու գունա դիուլն ածիլ տալով փուրդունը քշում ա: Գեղերումն իմացած են ըլում, որ Գաբրիել հրեշտակն էկել ա Եներալի ու իրա կնգա ֆոքին առնի, չիմն էլ ուրախանում են, քեփ սարքում, քշերը դուս գալի թմաշի:

Ճիքկոն տանում ա թաքավորի դռանը ոտն անում: Ինչքան ժողովուրդ կա, հվաքվում են թմաշի: Ճիքկոն բաց ա անում կուբոյի դփուլը, Եներալը տենում ա Ճիքկոն իրան բերել ա թաքավորի դուռը, ուզում ա փախչի, հմա էնքան մարթի ձեռից ուր կարա փախչի, ամենքի սիրտն էլ դադել ա:

Ճիքկոն կապտում ա էրկուսին էլ ու ասում ա.— Խու տեհաք, որ թաքավորի կնիկն ում ծոցիցն ա դուս գալի: Մի թաքավոր, որ կարում չի իրա կնիկը պիե, նա կարա՞ աշխար կառավարե: Ժողովուրթը թաքավորին թախտիցը թոլ ա անում, իրեքին էլ իրար հետ տանում են գցում Քուռը: Ընդիանց էդը Ճիքկոն ասում ա.— Թարավորի ու Եներալի ապրուստը փայ արեք քյասըբնուն, ում ֆողը որ խլել են, թող գնա տիրանա, փորեցեք, ցանեցեք, ձեր հմար ապրեցեք:

Տղեն էլ ըլիլ տի էդ թավուր: